

ԿԻՐԻԿԻԱՅԻ ԱԿՆԵՐ ՎԱՆՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Ա. ՃԵՎԱՀԻՐՁՅԱՆ

Կիրիկիայի Հայկական պետության նշանավոր վանքերից մեկն էր Ակները: Ըստ հայ ժամանակագիրների տված տեղեկության, Ակներ վանքը կառուցել է Ռուբինյան Լևոն II-ը, թագավոր օծվելուց քիչ ժամանակ անց: Ակների կառուցման մասին Սամվել Անեցու շարահարողը գրել է հետևյալը. «Ի Ոհ2. (1197) թվին օծեալ եղև թագաւոր Հայոց Լևոն...: Սա շինեաց զսուրբ ուխտն Ակներ կոչեցեալ, և զեկեղեցիս բարձրացուցեալ և աշխարհի շինող եղեալ...»¹: Նման տեղեկություններ են պարունակում Սմբատ Սպարապետի (որը ժամանակակից էր Լևոն II թագավորին) «Տարեգրքը»², Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոցը»³ և Հեթում «Պատմութիւն ազգին Ռուբինյանց, թէ որպէս տիրեցին Կիրիկիոյ»⁴ աշխատությունը: Ս. Մելիք-Բախչյանը Ակներ վանքի կառուցումը ենթադրում է 1198—1203 թթ. միջև⁵: Ակներ վանքում են բազմաթիվ իշխանների ու հոգևոր առաջնորդների դամբարանները: Ակները եղել է նաև Կիրիկիայի հայ գրչության նշանավոր կենտրոններից մեկը: Այնտեղ գրված գեղեցիկ և բարձրարվեստ ձեռագիր մատյանները մինչև օրս էլ հիացմունք են պատճառում մասնագետներին: Ակների ընդամենը ձեռագրերի աշխարհում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում, Վիեննայի և Վենետիկի Միխիթարյան միաբանությունների գրապահոցներում, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում և այլուր:

Պատմական սուղ տեղեկություններից հայտնի է, որ Լևոն II, Հեթում I և Օշին թագավորները պարբերաբար այցելություններ են կատարել Ակներ: Կրոնական, գրչության և ուսումնական կենտրոն լինելուց բացի Ակները եղել է Կիրիկիայի հայկական ուխտության ազգային և քաղաքական գործերի խորհրդարանը: Մայրաքաղաքից և պալատական մեքենայություններից հեռու, յեզոք մի վայրում խորհրդակցելու համար թագավորները՝ հատկապես Լևոն II-ը, գնում էին Ակներ: Սաի պալատի դիմանադիտական գործերի խորհրդարանը գտնվում էր Ակներ վանքում, իսկ կրոնական գործերի կենտրոնական խորհուրդը՝ Մաշկևոր վանքում: Արքունիքին մատուցած բազմաթիվ ծառայությունների շնորհիվ Ակներ վանքը ուներ յուրահատուկ դիրք:

Ակներն իր գոյությունը պահպանել է մինչև 1360 թ.: Աշխույժ գործունեություն է ունեցել 1210—1336 թթ. միջև: 1337 թ. ամոթալի պայմանագրից հետո՞ց այլևս չենք հանդիպում Ակներում գրված ձեռագրերի: Վերջին անգամ Ակներ անունը հիշվում է 1342 թ.: Սին քաղաքում կայացած եկեղեցական մեծ ժողովին մասնակից հոգևոր առաջնորդների թվում կա «Յովհաննէս հայր վա-

1 Սամուէլի քահանայի Անեցույ հաւաքմունք ի գրոց պատմապրաց. Վաղարշապատ, 1893, էջ 144:

2 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 222: «...Ակներոյն զոր ինքն էր շինեալ...»:

3 Կ Ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 159: «...կարգէր վանորայս ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ և բազմացուցանէր զպիտոյս նոցա, ...յորոց մի է ի վանորէիցն, զոր կարգեաց նա, հռչականունն Ակներն կոչեցեալ վանք»:

4 Մանր ժամանակագրութիւններ, կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. II, Երևան, 1956, էջ 104:

5 Ս. Մելիք-Բախչյան. Ակների գրչության դպրոցը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 3, էջ 144: Հայ ժողովրդի պատմութիւն. հ. III, Երևան, 1976, էջ 800: Սխալմամբ գրված է «Ակների նշանավոր վարդապետարանը կառուցել է տվել Լևոն Գ թագավորը (1270—1289)»:

6 Այդ պայմանագրով, Կիրիկիայի հայկական պետությունը Եգիպտոսի սուլթանությանն էր դիմել ձկեր գավառ և Ջահան գետի ձախակողմյան տիրույթները Այաս նավահանգիստ-քաղաքի հետ միասին: Սա պետության համար թե՛ տնտեսապես, թե՛ հողային տիրույթների և թե՛ ռազմագիտական դիրքերի կորստի տեսակետից քայքայիչ հետևանքներ ունեցավ:

նից Ակներոյն»⁷։ Պետության ներքին պառակտումների, լատինամոլ հոսանքի զորանալու, երկրի տնտեսական Հզնաժամի և ընդհանուր անկման պատճառով վանքն անշուքանում է։ Բացի այդ, Կիլիկիայի հայկական պետության գործերին առավել շահով սկսել էին միջամտել Հռոմի պապերի ներկայացուցիչները։ Ակներ վանքը կոչվել է նաև Ականց անապատ։ Ակները ժողովրդական, իսկ Ականցը՝ դրական կոչումն էր։ Ակների մասին հաճախ է գրվել։ Ուսումնասիրությունների մեծամասնությունը Ակներում և Կիլիկիայի այլ վայրերում ստեղծված ձեռագրերի հիշատակարաններին՝ Ակների մասին բովանդակած տեղեկություններին ծայրաբաղ է և դրան համարված ժամանակագրական կցկտուր նկարագրություն։

Պատմադիտական աշխատություններում մինչև այժմ ճշտված չէ միջնադարյան Ակներ վանքի դիրքը։ Ակների տեղագրության մասին տեղեկություններ կան միջին դարերի ժամանակագրություններում։ Սակայն դարերի ընթացքում փոխվել են տեղանունները, ավերվել և կորսվել են ննթարկվել, բնիկ հայ ազգաբնակչության տեղահան լինելու կամ գաղթի պատճառով մոռացության և մատնվել հուշարձանները և հայրենի վայրերը։ Պատմագիր Սամվել Անեցու շարահարդը հետևյալն է դրել Ակներ վանքի դիրքի մասին. «Եւ ՚ի հասանել վախճանի թագաւորին Հեթմոյ, առ եղր Պարատիս զետոյ որ կոչի Ակներ, նախ կրօնաւորեցաւ և կոչեցաւ անուն նորով Սակար, և ասլա հանդեաւ՝ և թաղեցաւ ի թրազարկն»⁸։ Նույն իրադարձության մասին Հեթմում Պատմիչն իր «Թրոնիկոնում» ունի հետևյալ տեղեկությունը. «ԹՄՀ. (1270) ամի վախճանեցաւ րարի թագաւորն Հայոց Հեթմում յամսանն հոգտեմբերի, ի՛ ՚ի սա՛մանս Բարձրբերդոյ ՚ի զնոն որ կոչի Ակներ, առ եղր Պարատիս զետոյ»⁹։ Իսկ Սմբատ Սպարապետը բավարարվել է միայն նշելով. «...առ ստորոտով Բարձրբերդոյ ՚ի գեօղն որ կոչի Ակներ...»¹⁰։

Կիրակոս Գանձակեցին գրել է ևս III-ի մահվան մասին և այդ հատվածում Ակների դիրքի վերաբերյալ մի անորոշ տեղեկություն կա. «Եւ յետ օրինաւոր սգոյն կաղմեցին զմարմինն առ թաղելն և և հղև հակառակութիւն, զի կէսքն ասէին թաղել զնա յարապական քաղաքին ՚ի Սիս և այլքն՝ ՚ի վանքն, որ կոչի Ակներ, զի յոյժ սիրէր նա զայն վանք վասն բարուր կարողաւորութեան նոցա և հաճոյակտն աղօթիցն։ Իսկ ոմանք ոչ համարեցան պատշաճ, զի եղր է տեղին այն և թշնամիք բազում էին նորա յայլազգեացն։ «Գուցէ, ասեն, եկեալ հանիցեն և այրենացն զդա հորով վասն բազում բիւռն, զոր ունին ընդ զմա»։ Ապա միաբանեալ ամենեցուն, տարեալ զմարմինն նորա թաղեցին ՚ի Սիս քաղաքի և զսիրտն և զփորոտին տարան ՚ի վանքն, որ կոչի Ակներ»¹¹։

Պատմագիրների տված վերոհիշյալ տեղեկությունները ի մի բերելով ստացվում է հետևյալը. Ակներ վանքը գտնվում է Բարձրբերդ (գավառի) սահմանում և նրա ստորոտին՝ Ակներ գյուղում, Պարատիս զետի ելքին։ Սրան կարելի է ավելացնել ձեռագիր մատյանների հիշատակարաններից բաղված տեղեկությունները Ակների մասին։ 1257 թ. Ակներ վանքում Հոհանես գրիչի դրած ժամագրերույկի գլխավոր հիշատակարանի բովանդակությունը մյուս հիշատակարաններին պետականացում է տեղագրական տեղեկությունների տեսակետից. «Յամի և թն հարիւրորդի և այլմու սկսեալ վեցերորդի (1257) թուարեւորեան Հայոց տումարի զրեցաւ ժամագրկունքս վասն ճառագարհի և անճարակութեան յաշխարհիս կիլիկեցոց, ՚ի զաւառիս Յախուտ, ՚ի հոյակաւոր և սուրբ մենարանիս Ակներ, ընդ հովանեաւ սրբուհոյ Տիրամար Աստուածածնի և սուրբ Առաքելոյն Տեառնեւբարե Յակովբայ և կենսակիր նշանիս սուրբ Կոստանդեա, և այլ աստուածունակ սրբոց որ հաւաքեալ կան ՚ի սմա։ ՚ի թաղաւորութեանս Հայոց Հեթմոյ...»¹²։

1329 թ. Ակներ վանքում գրված մատյանի հիշատակարանում Կարապետ գրիչը նշում է. «Գրեցաւ սա ՚ի կիլիկեցոց աշխարհ, ՚ի լեռնային կողմանս, յաստուածարեակ և ՚ի հույակաւոր ուխտս Ակներ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոց...»¹³։

7 Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 341։

8 Սամվել Անեցի, էջ 211։

9 Մանր ժամանակագրություններ. II, էջ 75։

10 Սմբատ Սպարապետ, էջ 252։

11 Կիրակոս Գանձակեցի, էջ 188։

¹² Avedis K. Sanjian. A catalogue of medieval Armenian manuscripts in the United States. Los Angeles, 1976. p. 675 (քնադիր ձեռագրի էջ 68բ—69ա)։

¹³ Լ. Ս. Խաչիկյան. ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1950, էջ 219։ Սմբատ Տեղ-Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի. հ. Ա, Վիեննա, 1970, էջ 64։

1315 թ. Հովհաննես գրչի գրած ձաշոցի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ գիրքս այս. թուականութիւնս Հայոց 947. (1315)....: Ի դաւառիս ծախուտ կոչեցեալ, Ի հռչակաւոր մեհաստանիս Ակներոյ վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին եւ այլ նշանացն եւ նահատակացն որ աստ կան հաւաքեալ»¹⁴:

Այս տեղեկութիւնները ասում են, որ Ակներ կամ Ականց վանքը գտնվում էր Կիլիկիացիոց աշխարհի Յախուտ դավառի լեռնային կողմերում, Բարձրբերդ (զավառի) սահմանում և նրա «ստորոտում», Պարատիս գետի եզրի հռչակավոր Ակներ գյուղում:

Կարելի է ավելացնել նաև XVII դարի կեսերի մի ժամանակագրի նշումը Ակներ գյուղի մասին. «...այժմ յաւուրս մեր, ասէ (ժամանակագիրը), ըստ անուան վանիցն՝ տեղին Ակներ կոչի. և վանիցն յաւերակին՝ աղօրէն, այսինքն ջրաղացք. զի ոչ ոք կայ Ի նմա վաղուց հետէ»¹⁵: Պարզվում է, որ XVII դարում Ակներ վանքն արդեն ավերվել էր և ջրաղացը լքվել:

Ակների դիրքը գտնելու համար մնում է որոշել միջնադարյան Կիլիկիայի Յախուտ. Բարձրբերդ զավառների սահմանները և Պարատիս գետը: Ղ. Ալիշանի, Գ. Միքայելյանի¹⁶, հայ և օտարերկրյա այլ գիտնականների՝ Միջնադարյան Կիլիկիայի պատմութեան ու աշխարհագրութեանը նվիրված աշխատութիւններում Ակների դիրքը որոշակի չէ:

Մ. Չամչյանը գրում է. «Ակներ կամ Ակներ և վանք մօտ Ի Տարսոն»¹⁷: Նա սխալմամբ Ակները տեղագրել է Դաշտային Կիլիկիայի Տարսոն բերդաքաղաքի մօտ: Խոշոր տեղագրական սխալներ են տեղ գտել Ներսես Ակինյանի «Ականց կամ Ակների վանքը»¹⁸ վերնագրով ընդարձակ հոդվածում: Հեղինակը Ակներ վանքը մերձեցրել է Անդրուն բերդին: Այդ սխալի առաջացման պատճառ են հանդիսացել 1332 թ. Անդրուն բերդի մերձակա վանքում կամ եկեղեցում գրչուցված զբնակչության փախուստի հիշատակագրութիւնները: Կրճատումներով ստորև տրվում է դրանց որոշ մասը.

«Յովհաննու Ոսկերեւանի Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու».

— III —

«Ի լրման տառատպութեանս՝ լիակատար գոհութիւն աստուծոյ...:

Ձոր տեսեալ զսրբոյ աւետարանին թարգմանութիւնս, որ ըստ Յովհաննու, բազմամեղ և արուպս Գրիգոր, գրեցի զսա և ստացայ Ի...:

Եւ արգ, աղաչեմ զամենեան, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ լսելով, յիշեսցիք աստուածածնոյ աղաթիւք զմիաբան եղբայրութիւն հրեշտակարանակ ուխտին Ակներոյ, զհոգեւոր հարքն մեր, եւս առաւել զծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան և զՍտեփանոս փրակակալն, որ զարինական շնորհեցին, և զՌուբէնն, որ դրեալն էր զարինական և զՎասիլ ճգնաւորն, և զծնողս նոցին, և զեղբայրս գրեցե՛ տէր զնոսա Ի գիրն կենաց, ամէն:

Յիշեսցիք Ի տէր և փայնոսիկ, որ Ի գիրն թղթոյս և հացկանն մերոյ երախտիք ունին, և զԱնպէտն, և զծնողսն իւր, զի և նա ետ մեզ հաց, գրեցե՛ տէր Ի գիրն կենաց զհացն անմահութեան, ամէն:

Գրեցաւ Ի թուականութեանս Հայոց 920. (1332), Ի թագաւորութեանն Լեւոնի աստուածաւորի՝ որդւոյ Աւշնի, Ի կաթողիկոսութեանն տեառն Յակովբա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Նշանին, մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ, Ի փառս, Քրիստոսի աստուծոյ մերոյ արհեսելոյն յաւիտյանս, ամէն. ամէն»:

— IV —

«...Ձմեռվալ և զփոյթն յաստուածային բանից ընթերցումն և համբերաւն Ի խստակրան պահս և յաղաւթս, զերջանիկ ծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան՝ ղյորդորաւն մեր Ի

¹⁴ Արտավազդ արք. Մյուրմեյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց նրուսահեմի սրբոց Հակոբյանց վանքի. հ. Ա, Վենետիկ, 1948, էջ 341:

¹⁵ Տե՛ս Ղ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ, 1885, էջ 535:

¹⁶ Գ. Գ. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 259.

¹⁷ Մ. Չամչյան. նշվ. աշխ., էջ 130 (Յաւելում):

¹⁸ Ներսէս Ակինյան. Մատենագրական հետազոտութիւններ. Քննութիւն և բնագիր. Վիեննա, 1953, էջ 139—196:

գրել զորոց, աղաչեմ լիշել ՚ի տեր, և զՍտեփանոս փակակալ Ականց վանացն, որ զաւրինակս շնորհւաց, և զԼիւթար հարն, և զայլ միաբան եղբայրութիւնն, որ կամակից եղեն ՚ի տալն, լիշեսցի: ՚ի տեր, բրիստոսասէր ընթերցաւոր և լսաւոր, և եղկելի գրաւդս, և աստուած զձեզ լիշէ՛՛՛:

Ձեռագրի գրիչ Վահրամի որդի Գրիգորը 1325 թ. աշխատել է Առաքելոց վանքում և 1325—1329 թթ. սիւրէ էլ՝ Ակներ վանքում: Իսկ զրանից հետո, հանգամանքների բերումով, տեղափոխվելու աշխատել է 1329—1331 թթ.՝ Ձորոյն սբ. Թորոսի վկայարանում և 1332—1334 թթ.՝ Անդրուս բերդի մերձակա եկեղեցում կամ վանքում և զրանից հետո էլ գուցե մի այլ վայրում: Ակներից հետոսում Գրիգոր գրիչն իր հարաբերությունները չի խզել Ակների վանականների հետ: Նա օգտվել է վանքի վանահոր, փակակալի և մյուս միաբանների բարյացակամ վերաբերմունքից և նրանցից ստացել է մատյանների օրինակները: Այդ սյատևառով էլ Ակներից զուրս արտագրած: ձեռագիր մատյանների հիշատակարաններում Երախտագիտությամբ միշտ շիշում է նաև Ակների վանքի վանահոր, փակակալի և իր հետ առնչվող վանականների անունները:

Ակներ կամ Ականց վանքի հովանավորները մեկից ավելի են: Սակայն գրիչները նրանց բոլորին միաժամանակ չէին նշում հիշատակարաններում: Ակներ վանքի հովանավորներն են. «Սբ. փրկիչը, Սբ. Աստուածածին Տիրամոր տաճարը, Տեառնեղբայր սբ. Յակոբ առաքելաբ, Կենսակիր նշանս սբ. Կոստանդեան և Սրբերի բազում նշխարները»: 1323 թ. Վարդան վարդապետի՝ Ակներում արտագրած Ավետարանի հիշատակարանում գրված է. «...ի գերահռչակ անապատիս որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և աստուածընկալ նշանացն և այլ բազմահոյ նշխարաց սրբոց...»²⁰: 1313 թ. ներսևս Կլայեցի գրիչը Ակներում արտագրած ձեռագրի հիշատակարանում գրում է. «Արդ գրեցաւ սա ՚ի յանապատս, որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ նշանիս, և սուրբ Յակովբայ, և այլ աստուածահաւք սուրբ նշխարաց...»²¹: 1324 թ. Վարդան գրիչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում՝ «...կատարեցաւ աւետարանս հոգեկապ և յականաւոր մենարանիս, որ մակադրեալ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս, և կենսակիր սուրբ նշանացս, և մասանց տէրունականաց, և նշխարաց սրբոց...»²²:

Ն. Ակինյանը Անդրուն բերդի մերձակա վայրում գրված ձեռագրի հիշատակարանի «...ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ նշանին, մերձ յաստուածապահ՝ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ»²³ հիշատակագրությունից ենթադրել է, որ Ակները գտնվում է Անդրուն բերդի մոտ:

Ոթն մենք խորանալու լինենք տեղագրական այդ սխալների մեջ, ապա Անդրունի (կամ Անդրինոսի) բերդը այնտեղ է որոնենք Հյուսիսային Ասորիքում, Հալեպից մի փոքր հարավ²⁴: Անդրուն կամ Անդրինոն բերդը, սակայն, գտնվում է Կիլիկիայի արևելյան հատվածում, արդի Անդրին (Andrin) գյուղի ծայրամասում: Պարզ է, որ Ակներ վանքը ո՛չ Անդրուն բերդին մերձ էր և ո՛չ էլ Անդրունը գտնվում էր Հալեպի կողմերում:

Ն. Ակինյանը թույլ է տվել երկրորդ մի սխալ ևս: 1334 թ. Վահրամի որդի Գրիգոր գրիչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում նշված է հետևյալը. «Փառք...: Գրեցաւ սա ՚ի

19 Լ. Ս. Խաչիկյան. Նշվ. աշխ., էջ 251—252: Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1347: Ն. Ա. Կիլիկյան. Նշվ. աշխ., էջ 139, 188:

20 Հակոբոս Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ՚ի Վիեննա. հ. Ա, գիրք Բ, Վիեննա, 1895, էջ 700: Լ. Ս. Խաչիկյան. Նշվ. աշխ., էջ 186:

21 Լ. Ս. Խաչիկյան. Նշվ. աշխ., էջ 97: Սմբատ Տեր-Ավետիսյան. Նշվ. աշխ., էջ 63:

22 Լ. Ս. Խաչիկյան. Նշվ. աշխ., էջ 190: Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8187:

23 Ն. Ա. Կիլիկյան. Նշվ. աշխ., էջ 190: Դրանից էլ սխալն անցել է նաև՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի. հ. Ա, Երևան, 1965, էջ 532, № 1347:

24 Ս. Վ. Բոունազյան. Հայաստանը և Սելյուկները XI—XII դդ., Երևան, 1980, էջ 180, ծան. 47:

Կիլիկիացուց աշխարհ՝ ի թուականութեանս Հայոց 929. (1334) ի հայրապետութեան տեառն Յակոբայ, եւ ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի արքայի <՝ի հռչակաւոր ուխտս Ակներ կոչեցեալ> ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Նշանիս: Ձեռամբ ամենաթշուառ[ի] Գրիգորի, ժանտատես գրով եւ բազմաշփոթ մտաւ: ի խնդրու... ..այլ յիշեսցիք ի տէր զեղկելի գրողիկս զԳրիգոր, եւ զհայրն իմ զՎահրամ եւ զԼորեսին եղբայրսն՝ զՍտեփանոս քահանայ, եւ զԱնգրէասն, եւ զՍարգիսն, եւ զԹորոսն...»²⁵: Մեր կողմից փակագծերի մեջ առնելով <՝ի հռչակաւոր ուխտս Ակներ կոչեցեալ> նախադասութիւնը չկա բնագրի հիշատակարանում: Դա հորինել է Ն. Ակինյանը: Այս ձեռագիր Ավետարանը գրվել է ոչ թե Ակներ վանքում, ինչպէս իր հոգովածում նշել է Ն. Ակինյանը, այլ Անդրունում՝ բերդի մոտակա վանքում կա՞ր եկեղեցուց: Վահրամի որդի Գրիգոր գրիչի գործունեութիւնից պարզվել է, որ նրա 1332—1334 թթ. աշխատանքի վայրը եղել է Անդրունում: Ուստի սխալ կլինեք վերոհիշյալ Ավետարանի գրչութեան վայրը համարել Ակները կամ մի այլ վայր:

Բ. Սարգիսյանը սույն Ավետարանի գրչութեան վայրի համար նշել է. «Տեղի Կիլիկիա (Հաւանօրէն Զորոյ վանք): Զորո վանքի հովանավորներն էին. Մարգարիտ Աստուածածին, Մանկանց Նոր Սիովնի, Կենսաբեր սուրբ Նշանացն»:

Պարզվում է, որ Գրիգոր գրիչից մինչև մեր օրերն է հասել 1352 թ.՝ երկու եւ 1334 թ. իշխման Անդրունում գրված ձեռագիր մատյան: Ուստի հիշյալ ձեռագրի գրչութեան վայրն է միմիայն Անդրուն բերդի մերձակա վանքը կամ եկեղեցին:

Ն. Ակինյանն իր նույն հոգովածում արել է եւ մեկ հավելագրում 1325 թ. Կիլիկիայի Առաքելոց վանքում Վահրամի որդի Գրիգոր գրիչի արտագրած Հոհան Ոսկերեւանի «Մեկնութիւն թղթոյն Կողոսացւոց» աշխատութեան հիշատակարանի մեջ. «...աւարտեցաւ Մեկնութիւն թղթոյն Կողոսացւոց, զոր արարեալ է երանելի սուրբ հայրապետն Յովհան ոսկերեւան..., ի թուին Հայոց 929. (1325) ի թագաւորութեան քարեպաշտին Լեւոնի. եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեան, ի վանս գերահռչակ որ կոչի <Ակներ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնի եւ սրբոց> Առաքելոցն եւ այլ բազմահոյլ վկայիցն: Արդ աղաչեմ... յիշեսցիք յաւաքս ձեր սուրբ ուխտին Ակներոյ զծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան, եւ զՍտեփաննոս հայրս... զմեզ յիշեսցիք յաղաթս ձեր՝ զանպիտանս Գրիգոր գրիչ եւ զհայրն իմ զՎահրամ եւ...»²⁶: Ձեռագրի բնագիր հիշատակարանում չկա <Ակներ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնի եւ սրբոց> նախադասութիւնը:

Կարելի է ավելացնել, որ նույն Վահրամի որդի Գրիգոր գրիչը հիշյալ Առաքելոց վանքում, նույն 1325 թ. արտագրել է նաեւ մի «Ճառքնորդ»։ Նրա բնագիր հիշատակարանը եւ նման է նախորդին, ուր և կրկնվում է Առաքելոց վանքի անունը. «...ի վանս գերահռչակ, որ կոչի Առաքելոցն...»²⁷:

Ակներ վանքի մերձավորութիւնը Բարձրբերդին և վերջինիս մերձավորութիւնը խորին անապատին, բնականաբար մերձեցնում է Ակները խորին անապատին: Ն. Ակինյանը խորին անապատը տեղագրել է Առակլիւմ²⁸: Հ. Ոսկյանը, կրկնելով այդ սխալը, ավելի խորացել և հորի-

²⁵ Բ ա ռ ւ ս ե ղ Ս ա ռ դ ի ս յ ա ն. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի վեներիկ. հ. Ա, վեներիկ, 1914, էջ 698: Ն. Ա կ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 190—191:

²⁶ Բ. Ս ա ռ դ ի ս յ ա ն. նշվ. աշխ., հ. Բ, վեներիկ, 1924, էջ 572: Ն. Ա կ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 150—181: Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 155ա: Ս մ բ ա տ Տ ե ռ-Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 579: Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 195:

²⁷ Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 196:

²⁸ Ն. Ա կ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 139 և 140: Նա նշել է. «խորին կամ խոռնի, «Առակլի», «որ է մերձ ի սահմանս Բարձրբերդոյ եւ Լեւոնկլային, անառիկ զղեկացն». «յնապատի Առակլի, որ անուն խորին ճանաչի: Այս շփոթութեան պատճառ է հանդիսացել 1305 թ. խորին անապատում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում նշված զրչութեան վայր՝ Առակլի անապատի անվան սխալ ընկալումը: «Արդ եղեւ զբաւ ցանկալի յայտ տառի ի նահանգիս Կիլիկի յանապատի Առակլի, որ անուն խորին ճանաչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ի թուականութեան հայկազնի. յԶԾ. եւ շորթորդի (1305) եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորի, եւ ի թագաւորութեան Հեթմի,» (տե՛ս Հ ա կ ո - բ ո ս Տ ա շ յ ա ն. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի վեներիկ. հ. Ա, գիրք Բ, էջ 771, № 324:

նեկ է պրոլոթյուն շունկոց մի վանքի անուն. «Հերակլէայի վանք, Կիւրիստոսայի վանք»²⁹: Միշնադարյան Հայերի Առակլի անվանած քաղաքը հնում կոչվել է Հերակլեա Կյուրիստոս (այժմ՝

Էրեցլի [Eregli]): Մյուս էրեցլիից զատորոշելու համար քաղաքը կոչվում է նաև Կոնյա էրեցլիսի (Կոնիայի էրեցլի): Հայերը ոչ մի ժամանակ այդտեղ կամ շրջակայքում չեն ունեցել խորին անապատի նման նշանավոր հոգևոր մի հաստատություն սելջուկ-թուրքերի երկրում: Սրանից էլ պետք է եզրակացնել, որ Կիլիկիայի Ակներ վանքը այս անգամ էլ սխալմամբ տեղադրվել է Տավրոս լեռների հյուսիսային լանջի ստորոտին: Սխալմունքի պատճառ հանդիսացող խորին անապատի «առակելի»³⁰ ածականը զուտ հայերեն բառ է և նշանակում է՝ ձաղկելի, ձաղկակծելու, երեսը սևացնելու և նման իմաստներ ունեցող³¹: Դա ցույց է տալիս խորին անապատի խստակաց, ծուծկալ, հսկող, խոնարհ, լուսմաշարշար, ճգնական, համեստ և խարազնազգեստ վանականների կյանքը: Խորին անապատի «Առակելի» ածականը վերածվելով Առակելի, վանքը և նրա մերձակա վայրերը տեղադրվել են արդի էրեցլի գյուղաքաղաքում կամ նրա շրջակայքում. Ակների և էրեցլիի միջև բարձրանում է Կիլիկյան Տավրոսի հսկա լեռնաշղթան:

Միջնադարյան ժամանակագրություններում հիշատակվող Պարատիս գետը, որի եզրին էր գտնվում Ակները, հոսում էր Կիլիկիայի միջով ու թափվում Միջերկրական ծովը: VII դարի Անանուն աշխարհագրի «Աշխարհացոյցում» Պարատիս գետի մասին նշված է հետևյալը.

«Յաղագս Երկրորդ Հայոց.

«Աշխարհ Երկրորդ Հայք, որ կոչին Երրորդ Հայք, յկից կալով Կիլիկիոյ առ Տարոս լեռամբ յեր Ամանոս լեռին, որ բաժանէ քնդ նա եւ քնդ Կոմագենի Ասորոց մինչև ցեփրատ:

Ունի և այլ լեռինս. Զիգոն-Բասիլիկոն և զՈրոմանգոն. եւ գետ զնոյն լանուն Որոմանգոն և] զՊիլի[Րամիս և զՊառատիս եւ [զՄելաս], զԿիականս եւ զԿառոմոսոս, և դրունս երկու ելանելոյ յԱսորոց»³²:

VII և VIII դդ. հայոց Պարատիս կամ Պառատիս անվանած գետը բյուզանդացիների Պարադիսոս պոտամոս (Παράδεισος ποταμός) գետն էր, Եվրոպացի նշանավոր պատմաաշխարհագետ և Մերձավոր Արևելքի երկրների մասնագետ Էրնստ Հոնիգմանը հիշյալ գետը սխալմամբ նույնացրել է արդի Պերտիզ չայ (Pertiz çay) գետակի հետ³³: Այդ գետակի հովտում էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության Բերդուս բերդը: Դա գտնվում է Մարաշ քաղաքի հյուսիսարևմուտք և արևելքից դեպի արևմուտք հոսելով՝ խառնվում է Ջահան գետին: Այս գետակը ոչ թե Կիլիկիայում է, այլ Եփրատացոց երկրում: Ուստի Պարատիս գետի եզրին գտնվող Ակներ վանքը չէր կարող լինել Մարաշի մոտակա Բերդուս բերդի մերձակայքում, արդի Պերտիզ չայ գետակի ափին:

Մեր երկարատև ուսումնասիրից հետո պարզվեց, որ Միջնադարյան Պառատիս կամ Պարատիս գետը այժմ կոչվում է Զամանտրուս (Zamantis), միջին հոսանքում կոչվում է Սեհան նեհրի (Seyhan nehri): Սա հոսում է Ադանա քաղաքի կողքով: Այդ պատճառով Կիլիկիայի հայերը այն անվանում էին «Ատանու գետ»:

Այն հեղինակները, որոնք Պարատիս գետի տեղագրման համար իբրև աղբյուր օգտագործել են է. Հոնիգմանի տվյալ աշխատությունը, կրկնել են հիշյալ սխալը: Ղ. Ալիշանը սկզբը է դրել «Մամնդաւ»³⁴ կոչվող մի գետի անվան և մեկ հարյուրամյակի ժամանակամիջոցում այն գետատավորվել և քնդհանրացել է: Անցյալում գոյություն չի ունեցել Մամնդավ անունով գետ: Դա թուրքական Զամանտրուս անվան հայերեն թարգմանությունն է: Ղ. Ալիշանին հայտնի չի եղել Պարատիս և Զամանտրուս անունների միևնույն գետին պատկանելը: XX դարի սկզբից սկսել են գործածել «Մամնդավ գետ» տեղանունը, առանց գիտենալու դրա հին անունը: Գոյացել է երկու

²⁹ Հ ա մ ա զ ա ս ք Ո ս կ յ ա ն. Կիլիկիայի վանքերը. Վիեննա, 1957, էջ 105:

³⁰ Նույն տեղում. նշված է՝ «Առակելի կամ Առակելի վանք— Այս անունով վանք կամ անապատ չկա, այլ Պերճեր վանքը կոչված է Առակելիի կամ Հերակլէայի վանք—Կիւրիստոսայի անապատ, զի սոյն վիճակի մեջ կամ անոր մերձ էր» (հմտ. Սիսուան, էջ 173 և հտ.):

³¹ Ա. Ս ու թ ի ա ս յ ա ն. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 255:

³² Ա. Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 100:

³³ A. A. Vasiliev, E. von Honigmann. Byzance et les Arabes. T. III, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, S. 63 und K. II.

³⁴ Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 61, 169:

գետի անուն՝ Պարատիս և Մամնդավ։ Վերջինս հայտնի է անունից։ Սակայն շատերին անհայտ էր մնում առաջինի դիրքը։

Այն աշխատություններում, ուր օգտագործվել է Ղ. Ալիշանի հորինած «Մամնդավ գետ» տեղանունը, սխալ է թույլ տրվել Պարատիս գետի անվան նկատմամբ։ Պարատիս գետին մենք հետագայում առիթ կունենանք անդրադառնալու։

Պարատիս և արդի Զամանտըսու գետերի նույնության հարցը պարզվելուց հետո Ակներ վանքի տեղագրությունը որոշելը հեշտանում է։ Հեթում Պատմիչի ցուցմունքով Ակները գտնվում էր Պարատիս գետի եզրին և Բարձրբերդի (գավառ) սահմանում։ Բարձրբերդ գավառի սահմանը պետք է որոնել Սմբատ սպարապետի ցուցմունքով՝ Բարձրբերդի «ստորոտին», այսինքն գավառի հարավային շրջանում, Յախուտ գավառին կից։ Միջնադարյան Կիլիկիայի հայոց Ցախուտ գավառը գտնվում էր արդի Սեջան գետի վերին³⁵ և միջին հոսանքներից դեպի արևմուտք տարածվող երկրամասում։ Ուստի՝ Ակներ վանքը գտնվում էր Բարձրբերդից հարավ, Զամանտըսու-Սեջան գետի միջին հոսանքներում, այս փոխ, արդի էյներ գյուղի (Eynes köy) վայրում։

Ակների տեղագրման հարցի լուծման կապակցությամբ որոշ շահով ճշմարտության է մոտեցել Ս. Մելիք-Բախշյանը. «Թուրքիայի հարավային կողմում (այսինքն՝ պատմական Կիլիկիայի հյուսիսում), Սիսուն գետի վերին հոսանքի շրջանում... տեղագրված է մի լեռ 1235 մ բարձրությամբ, որը կոչվում է Աղ-Միդեք Դագ կամ Ակիեք Դագ... որը մեր խորին համոզմամբ Ակներ անվան բացահայտ աղավաղումն է՝ թուրքերենին հարմարեցնելու և նոր իմաստ տալու դիտավորությամբ։ Հիշյալ լեռը ճիշտ և ճիշտ ընկնում է պատմական Ցախուտ գավառում, Բարձր բերդից հարավ-արևմուտք։ Մենք չենք կասկածում, որ Ակներ վանքի, ինչպես նաև նույնանուն գյուղի ավերակները պետք է որոնել հենց այդ լեռան շրջակայքում»³⁶։ Ս. Մելիք-Բախշյանը Կիլիկիայի տեղանքին ծանոթ է քարտեզներով։ Նա չի եղել տեղում և հետևաբար փոքր գյուղերին, ավաններին, 4—5 տնից բաղկացած օբյեկտներին և լքված վայրերին չէր կարող ծանոթ լինել։ Արդի էյներ գյուղը, մյուս գյուղերի հետ համեմատած, ունի յուրահատուկ դիրք։ Ակների վայրում մինչև օրս էլ գոյություն ունի գետանցման դարավոր ավանդույթ։ Այսինքն՝ միջին դարերից, գուցե ավելի վաղ շրջաններից Պարատիս (այժմ՝ Սեջան) գետի մի ափից մյուսը մարդիկ անցել են մեծ նավակներով։ Այդ նավակների մեջ նույնիսկ կարելի է մտցնել 2—3 ձի կամ կով։ Ուստի Ակներ գյուղը անցյալում վանական լինելուց բացի եղել է նաև ճանապարհների կարևոր հանգրվան։ Ծամփորդներին նավով մի ափից մյուս ափը փոխադրելու մասնավոր իրավունքը մինչև օրս էլ նավատերերին տրվում է ավանդական ձևով, կապալով։ Կապալից գանձված եկամուտը XIII—XIV դդ. հավանաբար հասնում էր Ակներ վանքին։ Իսկ այժմ՝ Սեջան վիլայեթի նահանգային գանձարանին։

Վերոհիշյալ Ակ-իննեկ դաղ լեռը ունի 2056 մ բարձրություն և գտնվում է Կիլիկիայի հայոց Բարձրբերդ գավառում և ոչ թե Ցախուտ գավառում։ Ակներ վանքը կառուցվել էր լեռն II-ի կողմից, իր սեփական հոլամասի վրա։ 1198—1204 թթ. Բարձրբերդ գավառի տերն էր Ռուրինյան պարոն Մլեհի որդի Գևորգ իշխանը³⁷։ Ուստի հասկանալի կլինի, որ լեռն II-ը իր համար սիրելի վանք չէր կառուցի թեկուղ հորեղբորորդի Գևորգ իշխանի³⁸ տիրույթում։ Սրանից էլ կարելի է եզրակացնել, որ Ակներ վանքը և գյուղը կառուցված չէր կարող լինել Ակ-իննեկ դաղ լեռան շրջանում։ Այժմ էյներ գյուղը նահիյի (գավառակ) վարչական կենտրոն է։

35 Սեջան գետի վերին հոսանքը կոչվում է Զամանտըսու։

36 Ս. Մելիք-Բախշյան. նշվ. աշխ., էջ 143։

37 Սմբատ Սպարապետ, էջ 210։ լեռն II-ի թագադրության հանգիստավոր արարողություն մասնակիցների թվում կար «Իշխանն Բարձրբերդդ Գեորգ»։

38 լեռն II-ը, կասկածելով Գևորգ իշխանի զրսևորած քաղաքական ընթացքից, նախ 1204 թ. բանտարկել էր նրան, ապա կուրացրել և բաց թողել 1208 թ.։ Ռուբինյան պարոն Մլեհի որդի Գևորգ իշխանը, քաշվելով հոր կառուցած Մեծքարի վանքը, այնտեղ էլ 1214 թ. մահացել և թաղվել է։

Ակները չի եղել մեծ քաղաք, այսինքն պարիսպով և աշտարակներով պաշտպանված հոգևոր հաստատություն։ Այդ պատճառով էլ պատշաճ չէին գտել 1219 թ. մահացած Լևոն II-ի մարմինը թաղել Ակներում։ Կիլիկիայի հայկական պետության սահմանների մեջ ապրում էին բազմազան, այդ թվում նաև թշնամի պետությունների ժողովուրդներ։ Կիլիկիայի բազմաթիվ վայրերում բնակվում էին հույներ։ Տավրոս լեռների վրա խաշնարածություն անելու նպատակով արտոնություն էին ստացել վաղկատուն թուրքմենները։ Երկրում ապրում էին նաև մահմեդական այլ տարրեր։ Կիլիկիայում բնակություն էին հաստատել հմրոպացիներ՝ խաչակիրների հետնորդներ։ Նրանք ևս թշնամական տրամադրություններ ունեին Լևոն II-ի նկատմամբ։ Այդ կասկածներն էլ, որ Կիրակոս Գանձակեցին դրել է. «...զի եզր է տեղին այն և թշնամի բազում էին նորա յայլագեացն»³⁹։ Ակներ գյուղը և վանքը չեն ունեցել ռազմագիտական ո՛չ դիրք և ո՛չ էլ պաշտպանություն, այդ պատճառով էլ իշխանների մի մասը առարկել է թաղավորի մարմինը անպաշտպան վանքում թաղելու դեմ։ Ակներ գյուղից 3 կմ հյուսիս, Սեյհան գետից արևմուտք, ափից քիչ հեռու գտնվում է Ակյորեն (Akören) կոչվող գյուղի ամրոցը⁴⁰։ Սակայն դա չէր կարող պաշտպանել Ակների դամբարանը։

Ակները գտնվում էր Կիլիկիայի Հայկական պետության «Կիլիկիա աշխարհի» կենտրոնական մասում, Դաշտային և Լեռնային Կիլիկիաների միացման եզրագծում։ Կիրակոս Գանձակեցու վերոհիշյալ «...զի եզր էր տեղին այն» արտահայտությունը ընկալվել է այլ իմաստով և ստեղծվել է թյուրիմացություն, թե «...Ակները, գտնվելով երկրի ծայրամասում և մշտապես ենթակա լինելով թշնամիների հարձակումներին, ապահով վայր չէ»⁴¹։ Ակները կառուցված չէր սահմանամերձ վայրում, ինչպես ենթադրվում է նկարագրությունից։ Կ. Գանձակեցու օգտագործած «եզր» բառը նշանակում է «օգնել»⁴²։ Գանձակեցին ճիշտ է նկարագրել Ակներ վանքի դիրքը։ Ակները պաշտպանական համալիր կամ բնական դժվարամատչելի դիրք չուներ և հարձակման ենթարկվելու ժամանակ օգնություն կարիք կար։ Այդ է ցույց տալիս Գանձակեցու «եզր տեղի» արտահայտությունը։ Իսկ «այլազգի թշնամիներն» էին արտաքին և ներքին օտարազգի հակառակորդները, որոնք ընկել էին Լևոն II-ի զորեղ մականի տակ։

Ակների վանքը ունեցել է բազմաթիվ խորաններով եկեղեցիներ։ Դրանց գլխավորը Ս. Աստվածածին Տիրամոր տաճարն էր։ Վանքը ունեցել է իր համալիրը։ Վանականների և ճգնավորների խուցերից ու մենարաններից բացի եղել են հացի փուռ, սեղանատուն, գրչատուն, կազմատուն, դպրանոց, գրապահոց, մատուռ-պահարան, մթերանոց, տապանատուն, հյուրանոց, աղբյուր, փարախ, բանջարանոց և այլն։ Ակներում գրված ձեռագրերի հիշատակարանների բովանդակությունից պարզվում է, որ Ակների վանականները ունեցել են տնտեսական ներքին կազմակերպություն և աշխատանքի բաժանում։ Եղել են թուղթ կոկոզ, զտնտես, զմարմբան, կամ մանուկան, զհացբան, զփոմպոսն, զփակակալն, տեսուչ, հիւրատես, պարտիզպան և այլ պաշտոններ։ Մենք կարծում ենք, որ Ակներ գյուղի ջրաղացը ևս իբր եկամտաբեր կառույց, պատկանում էր վանքին։

Բանասիրության մեջ ընդհանրապես ընդունված է, որ Ակներ անունը վանքին տրվել է իբր «բազմաթիվ ակերի» կողքին գտնվելու պատճառով։ Սակայն դա չի կարելի գոհացուցիչ բացատրություն համարել։ Ակների անունը երկիմաստ է, ինչպիսին են եղել բազմաթիվ վան-

39 Կիրակոս Գանձակեցի, էջ 188։

40 Ակյորեն գյուղի ամրոցը հսկել է Սեյհան գետի երկու գետաբերանները։ Դրանցից մեկը գտնվում էր Ակներում, իսկ երկրորդը՝ Ակյորեն գյուղի և միջնադարյան Բարձրբերդ կոչվող բնակավայրի միջև։

41 Ս. Մելիք-Բախչյան, Նշվ. աշխ., էջ 142։

42 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 98։

քերի անունները: Ակն նշանակում է «նայել, ստուգել, հսկել»⁴³: Իսկ «ափներ»՝ նշանակում է «կնիքներ, կահիքեր, կստուգեր»: Բացի այդ, վանքի Ականց անունը տալիս է նաև «գոհարի, ակ-նեղենի» իմաստ:

Ռուբինյան իշխանության սկզբնական շրջանում, Վատկապետ XII դարի սկզբին, հայերի կողմից Դաշտային Կիլիկիայի նվաճման ժամանակ յուրացվում և նորոգվում էին բյուզանդացիներից ու արաբներից մնացած շինությունները: Ռուբինյան պարոն Թորոս I-ի (1100—1128 թթ.) շինարարական գործունեության ոլորտի մեջ էր մտնում նաև հոգևոր հաստատությունների վերականգնման գործը՝ հօգուտ Վալոց եկեղեցու: Այդ մասին է վկայում Կիլիկիայի հունական վանքերի ազգայնացումը: Թագավոր օծվելուց հետո ինքն II-ը կառուցել էր Ակներ վանքը և հարակից շինություններով ձևացրել այն: Ակները վերանորոգելու կամ վերականգնելու մասին ոչ մի խոսք չկա ժամանակագրություններում կամ հիշատակարաններում: Ուստի Ակներ վանքի համալիրը կարելի էր համարել XII—XIII դդ. զուտ հայկական ոճով շինված ճարտարապետական կառույց:

ЛОКАЛИЗАЦИЯ КИЛИКИЙСКОГО МОНАСТЫРЯ АКНЕР

М. Г. ДЖЕВАИРДЖЯН

(Резюме)

Акнер—знаменитый монастырь Киликийской Армении XIII—XIV вв. В статье уточняется место создания писцом Григором, сыном Ваграма, рукописей, которые до сих пор считались написанными в Акнере. В связи с критическим разбором некоторых сведений в специальной литературе выясняется тождество реки Паратис средневековых источников с современной Заманты-су и монастыря Акнер с современной деревней Эйнер.

⁴³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. Ա, Երևան, 1969, էջ 24: